Ա Մ Փ Ո Փ Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականին Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործել են հանրակրթության ոլորտի թվով 153 պետական ոչ առևտրային կազմակերպություններ (այսուհետև՝ ՊՈԱԿ): 2023թ. տարեվերջի դրությամբ գործող ՊՈԱԿ-ների թիվը կազմել է 152, քանի որ «Երևանի հ.201 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, համաձայն ՀՀ կառավարության 15.12.2022թ. N 1989-Ն որոշման, միացման ձևով վերակազմակերպվել և միացվել է «Երևանի Ներսես Մեծի անվան հ.124 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին:

Սույն հաշվետվությունը կազմվել է ՊՈԱԿ-ների կողմից 2023 թվականի համար ներկայացված տարեկան ցուցանիշների հիման վրա:

ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԸ

2023 թվականի ընթացքում ՊՈԱԿ-ների փաստացի մուտքերը կազմել են 18,807,465.1 հազ. դրամ, որից՝ 18,507,379.8 հազ. դրամը կամ 98.4%-ը կազմել են բյուջեներից մուտքերը, 162,818.0 հազ. դրամը կամ 0.9%-ը՝ ձեռնարկատիրական գործունեությունից, 137,267.3 հազ. դրամը կամ 0.7%-ը՝ այլ աղբյուրներից:

Գծապատկեր 1. ՊՈԱԿ-ների փաստացի մուտքերը 2023թ.



2023 թվականին ՊՈԱԿ-ներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 17,966,158.7 հազ. դրամ սուբսիդիա, իսկ ՊՈԱԿ-ների դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտները կազմել են 43,725.5 հազ. դրամ:

Գծապատկեր 2. Սուբսիդիա, դրամաշնորհներ



ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԵԼՔԵՐԸ

2023 թվականին ՊՈԱԿ-ների փաստացի ելքերը կազմել են 19,591,913.4 հազ. դրամ, որից՝ 18,958,749.5 հազ. դրամը կամ 96.8%-ը կազմել են ընթացիկ ծախսերը, 633,163.9 հազ. դրամը կամ 3.2%-ը՝ կապիտալ ծախսերը:

Գծապատկեր 3. ՊՈԱԿ-ների փաստացի ելքերը 2023թ.



Ընթացիկ ծախսերի 90.4%-ը կազմում են ՊՈԱԿ-ների աշխատակիցների աշխատանքի վարձատրությունն և դրան հավասարեցված վճարումները:

Գծապատկեր 4. ՊՈԱԿ-ների աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը



Աղյուսակ 1. ՊՈԱԿ-ների աշխատողների միջին ցուցակային թվաքանակը և միջին աշխատավարձերը, 2023թ.

	Միջին ցուցակային թվաքանակը (մարդ)	Միջին աշխատավարձը (հազ. դրամ)	Աշխատավարձի ամսական ֆոնդ (հազ. դրամ)
Վարչակառավարչական անձնակազմ	624	225.7	140,836.8
Մասնագետներ	7 589	127.3	966,079.7
Այլ աշխատողներ	2 236	126.3	282,406.8

ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Գծապատկեր 5. ՊՈԱԿ-ների կրեդիտորական պարտքերի կառուցվածքը



ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Գծապատկեր 6. ՊՈԱԿ-ների դեբիտորական պարտքերի կառուցվածքը



Աղյուսակ 2. ՊՈԱԿ-ների կրեդիտորական և դեբիտորական պարտքերի ցուցանիշները

հազ. դրամ

Ցուցանիշներ	2023թ.	
	տարեսկիզբ	տարեվերջ
1. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	**1,824,146.8**	**986,310,8**
այդ թվում՝		
1.1 Առևտրային գործունեությունից	209,879.1	199,174.8
1.2 Բյուջեների նկատմամբ	31,960.3	38,213.2
1.3 Աշխատավարձի և աշխատակիցների այլ հատուցումների գծով	8,706.2	1,186.8
1.4 Այլ	1,573,601.2	747,736.0
2. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	**75,925.2**	**41,046.2**
այդ թվում՝		
2.1 Առևտրային գործունեությունից	14,783.1	1,048.4
2.2 Բյուջեների գծով	43,802.6	19,879.7
2.3 Այլ	17,339.5	20,118.1

ՊՈԱԿ-ՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐ

Աղյուսակ 3. ՊՈԱԿ-ների ամփոփ հաշվեկշիռը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ

Ցուցանիշներ	2023թ.	
	տարեսկիզբ	տարեվերջ
Հիմնական միջոցներ (սեփականության իրավունքով)	1,922,971.0	2,021,570.8
Ամրացված գույք	117,942,665.3	117,105,255.6
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	22,958.0	18,402.9
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	2,503,098.4	1,680,138.3
Զուտ ակտիվներ (Սեփական կապիտալ)	2,831,429.4	1,753,179.9
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	117,736,118.4	118,085,877.2
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	1,824,146.8	986,310.8